

Հիշարժան օր Ծնողները՝ Ծնողների օրվա մասին Անահիտ ԲԱՐՏԵԴՅԱՆ (Արփիհնե Վարդանյանի մայրը, ԱՈՒԿ 3)

Հոկտեմբերի 13-ին Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում կազմակերպվեց հերթական Ծնողների օրը: Մենք՝ ծնողներս, հատկապես առաջին անգամ այցելողներս, անթաքույց զարմանքով էինք ծանոթանում ԱՈՒԿ-ի շենքային հարմարություններին ու այստեղ ստեղծված ջերմ մթնոլորտին:



Հրջում էինք միջանցքով և կարծես մի ուրիշ աշխարհում էինք և մի ուրիշ որակով էինք տեսնում մեր զավակներին: Հաճելի երկյուղածություն էր առաջացնում այն հանգամանքը, որ մեր զավակներն արդեն ինքնուրույն, հասուն մարդիկ են: Ես մտքեր փոխանակեցի նաև հարևան Վրաստանից ժամանած ծնողների հետ. նրանք նույն զգացողությունն ունեին:

Այստեղ ստեղծված բոլոր հարմարությունները և տեխնիկական հագեցվածությունը ծառայում են մի նպատակի՝ պատրաստել ագրոբիզնեսի և մարկետինգի մրցունակ մասնագետներ Հայաստանի և Վրաստանի ագրոբիզնեսի բնագավառում աշխատելու համար: ԱՈՒԿ-ը մի հաստատություն է, որտեղ դասախոսների պրոֆեսիոնալ աշխատանքի շնորհիվ ոչ միայն զարգանում են երիտասարդների ակնհայտ կարողությունները, այլ նաև բացահայտվում են թաքնված հմտություններն ու հնարավորությունները:



Մարդկային փոխհարաբերությունների և հաղորդակցության նոր որակ կա այս հարկի տակ, փոխվստահության այնպիսի մի մթնոլորտ, որ մեր ամենօրյա կենցաղային մրցավազքի պատճառով կարծես մոռացության ենք մատնել: Այդ ջերմությունը փոխանցվեց մեզ՝ ծնողներին, և այնպիսի

A Commemorative Day

Parents about Parent's Day

By Anahit BARSEGHYAN

(Mother of Arpineh Vardanyan, ATC 3)

On October 13, the Agribusiness Teaching Center organized its sixth Parent's Day. We, the parents of different ATC group students (especially those of the juniors) were pleasantly astonished at the sight of the ATC facilities and the friendly atmosphere. During the ceremony, we were even somewhat scared, if you will, of the fact that our beloved children are now grown-up and independent. I shared ideas with the parents of the Georgian students; they had the same sentiments.

Walking in the hallways and observing all ATC facilities, we appeared in a position that suggested a new and unexpected outlook of our children in their new roles as students of a western style education institution. All the conveniences and the high qualification of the instructors serve one major purpose – preparing competitive agribusiness and marketing specialists for the growing Armenian and Georgian agribusinesses. The ATC is a place where not only the obvious abilities of every individual student are developed but also their hidden skills and opportunities are exposed.



A new quality of human relationship, communication, and mutual trust was prevailing inside the walls of this wonderful teaching center, a quality that appears to be lost in our everyday life race. And this warmth was conveyed to the parents, and we made friends very quickly even though we were meeting each other for the first time.

The presentation by three ATC students was listened with a great interest. They presented their teachers, classes and outreach activities. We were honored being warmly welcomed by the USDA CADI Project Director, Sean Carmody and Daniel Dunn, Director of the ICARE Foundation. Dr. Dunn “disappointed” us not using a single word of criticism directed to the students. Instead, we heard words of admiration and appreciation from Dr. Dunn. I was following the expressions on the face of the other parents while Dr. Dunn and Mr. Carmody were delivering their speeches: the expectation changed gradually into pride.

Refreshments served by the students made the atmosphere even warmer. A few hours spent with the big ATC family was an amazing revelation for all the parents. ●

տպավորություն կար, կարծես մենք բոլորս վաղուց ճանաչում էինք միմյանց:

ԱՌԼԿ-ի երեք ուսանողներ ներկայացրեցին իրենց դասախոսներին, ուսումնական և արտաուսումնական աշխատանքները: Իրենց ներկայությամբ և ողջույնի ջերմ խոսքերով մեզ պատվեցին ԱՄՆ գյուղղեպարտամենտի Գյուղատնտեսության զարգացման կովկասյան նախաձեռնությունն ծրագրի տնօրեն Շոն Քարմոդին և Ազրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի հիմնադրամի տնօրեն Դենիել Դանը: Դոկտ. Դանը և պրոֆ. Քարմոդին մեզ փոքր-ինչ «հիասթափեցրեցին». սպասված քննադատական խոսքերի փոխարեն մենք լսեցինք մեր զավակներին ուղղված գովեստի ու երախտագիտության խոսքեր: Մինչ դոկտ. Դանը խոսում էր, ես հետևում էի մյուս ծնողների դեմքերին՝ սպասումը աստիճանաբար փոխվեց հպարտության:

ԱՌԼԿ-ի ընտանիքում անցկացրած մի քանի ժամը զարմանք ու հիացում առաջացրեց բոլորիս մեջ: Իսկ երբ հրաժեշտ տալուց հետո դրսում հայտնվեցինք անձրևի տակ, կարծես չէինք էլ նկատում այն: Մեզ չէր վախեցնում ոչ անձրևը և ոչ էլ այն ապագան, որ մինչ այդ թվում էր անորոշ: ○



We took leave and appeared in light autumn rain taking no notice of it. Not only the rain but also the future of our children does not fear us anymore. ○

ԱՌԼԿ-ը մասնակցեց ԱՄՆ Կրթական ցուցահանդեսին



Արմինե ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԱՌԼԿ 4

Ժամանա Գրիգորյանը, Արմինե Հարությունյանը և ես ԱՌԼԿ-ը ներկայացրեցինք 11-րդ ամենամյա միջազգային կրթական տեղեկատվական ցուցահանդեսում, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 23-ին, Մարիոտ Արմենիա հյուրանոցում: Ցուցահանդեսի հովանավորը էր ԱՄՆ պետղեպարտամենտի կրթական և մշակութային հարցերով բյուրոն, իսկ աշխատանքները համադրում էր Միջազգային կրթության հայկական խորհուրդը (ACTR/ACCELS):

Հպարտ ենք, որ ԱՌԼԿ-ի տաղավար այցելեցին մեծ թվով մարդիկ: Մենք հաճույքով պատասխանեցինք ԱՌԼԿ-ում սովորելու առավելություններին, ուսումնական պլաններին ու առարկայական ծրագրերին, ընդունելության պայմաններին վերաբերող և բազմաթիվ այլ հարցերի: Գոհունակությամբ են մշում, որ երկրի ներսում որակյալ կրթություն ստանալու ցանկություն ունեցող հայ երիտասարդների շրջանում տարեց-տարի ավելանում է հետաքրքրությունը ԱՌԼԿ-ի նկատմամբ:

Բ ա ց ի ԱՌԼԿ-ից, ակնհայտ հետաքրքրություն էին առաջացնում նաև Հայաստանի ամերիկյան համալսարանը, Հայաստանի ֆրանսիական համալսարանը, այլ համալսարաններ և հաստատություններ, հատկապես՝ արտերկրում (ԱՄՆ, Բուլղարիա, Ղազախստան և այլն) ուսում առաջարկողները: Մեկօրյա այս ցուցահանդեսը հայ ուսանողների համար եզակի հնարավորություն էր խոսելու ամերիկյան և եվրոպական համալսարանների, ինչպես և այն կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնք իրականացնում են փոխանակման ծրագրեր, ինչպես նաև ժամոթանալու գիտելիքների գնահատման TOEFL iBT, GRE և GMAT ծրագրերի պահանջներին: ○



ATC at the Annual US Education Fair

By Armine GABRIELYAN
ATC 4

Zhanna Grigoryan, Armine Harutyunyan and I represented the ATC in the 11th Annual U.S. Educational Information Fair held on October 23 in the Armenia Marriott Hotel. The Fair was sponsored by the Bureau of Educational and Cultural Affairs of the US Department of State and administered by the American councils for International Education (ACTR/ACCELS).

We were proud to have so many visitors at the ATC booth. We answered their questions concerning the advantages of learning in the ATC, the curriculum, entrance exams, etc. I am pleased to mention that there is a growing interest toward the ATC among young Armenians seeking good education inside the country.

In addition to the ATC, many visitors were definitely interested in the American University of Armenia, the French University of Armenia and other universities and institutions, especially those offering a study abroad (the US, Bulgaria, Kazakhstan, and others). This one-day education exhibition was a unique opportunity for Armenian students to speak to the representatives of some US and European universities and organizations that administer exchange programs and learn about the opportunities to continue their education in those universities as well as get informed about the computer-based testing for TOEFL iBT, GRE and GMAT. ○

Վերականգնվեց ԱՈՒԿ-ի գործարար ակումբը

Լսարանային պարապմունքների արդյունքները՝ գործողության մեջ, ժամանցի կազմակերպում ԱՈՒԿ-ի ուսանողների և շրջանավարտների համար, աշխատանք համայնքային ծրագրերի շրջանակներում, արժեքավոր հնտություններ սովորելը, որոնք անհրաժեշտ են ապագա աշխատանքում. սա ոչ լրիվ թվարկումն է այն նպատակների և ծրագրերի, որ ԱՈՒԿ-ի վերականգնված Գործարար ակումբը նախատեսել է 2006-2007թթ. տարեշրջանի համար: Ակումբի անդամ ուսանողներին խորհրդատվություն կապահովի ԱՈՒԿ-ի հրապարակախոսության դասախոս Պամելա Քարգը:

Բաց լինելով ԱՈՒԿ-ի բոլոր ուսանողների համար, Գործարար ակումբը վերջերս իր գործունեությունը սկսեց ուսանողների և շրջանավարտների ավանդական ամենամյա զբոսախնջույքի կազմակերպմամբ, որին հետևեց նույնպես ավանդական ամենամյա Ծնողների օրը: Ակումբի անդամները որոշել են նաև մասնակցել համայնքային ծառայությունների ծրագրերի, իսկ առաջիկա շաբաթներին ուսումնասիրելու են մի քանի տարբերակներ, օրինակ՝ այցելություններ մանկատներ, ծառատունկ, Գետառի հունի մաքրում և այլն:

Ըստ Պեմ Բարգի, Գործարար ակումբում աշխատանքի փորձ ձեռք բերելով ուսանողներն ավելի մրցունակ կդառնան ապագա գործատուների աչքում:

Նույններին ուսանողները կընտրեն ակումբի ղեկավարներին: Համեմատաբար մեծ ծավալի աշխատանքների իրականացման համար կստեղծվեն համապատասխան հանձնախմբեր: ○



ATC Business Club Rehabilitated

Putting classroom lessons into action! Creating fun events for ATC students and alumni! Working on community projects! Learning valuable skills that will be helpful in future jobs! These are just a few of the goals and projects the rehabilitated ATC Business Club has set for the 2006-07 school year. Pamela Karg, the ATC Public Speaking teacher will be advising the Club member students in their activities.

Open to all ATC students, the Business Club began by hosting the annual student-alumni picnic and followed up with the annual Parent's Day event. The Club members also organized an exciting Halloween Party October 31. Members have decided they want to do some community service projects and will explore several options in the coming weeks, including visiting an orphanage, planting trees or cleaning up a section of the Getar River. Students have also suggested converting the former kitchen and office area on ATC's first floor into a tea and coffee study room.

Pamela Karg, Business Club advisor and public speaking teacher, emphasized that she wants students to direct just how much the organization does this year. In the process, she wants students to try new events such as a community service project, put into action the lessons they learn in the classroom such as setting goals, and use their experiences gained through Business Club membership to make them more attractive to future employers.

Coming up in November, the students will elect leaders to guide the Club throughout the remainder of the year. Committees will also be organized to tackle some of the larger projects. ○

Հաջողության բանալի



Արթուր ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՈՒԿ-ի արտադրական պրակտիկայի համադրող,
կառավարման դասախոս

Թեև ԱՈՒԿ-ի ամառային արտադրական պրակտիկայի գործընթացը թե Հայաստանում և թե արտերկրում պարբերաբար վերահսկվում էր, սակայն ուսանողներից պահանջվում է նաև սեպտեմբերի սկզբին իրենց ութշաբաթյա փորձառության մասին հաշվետվություն տալ ԱՈՒԿ-ի գնահատող հանձնաժողովին և դասընկերներին: Պրակտիկայի հաշվետվություններն անցկացվեցին Ծաղկաձորում: Երկօրյա լարված աշխատանքն, այնուամենայնիվ, հաճելի մթնոլորտում անցավ:

Մենք ԱՈՒԿ-ում մեծ պատասխանատվությամբ ենք վերաբերվում արտադրական պրակտիկայի անցկացման մակարդակին և ագրոբիզնեսի ու այլ ընկերությունների՝ բանկերի, ընկերակցությունների, ոչ կառավարական կազմակերպությունների նախանձախնդիր ընտրությանը: Այն կարևոր նշանակություն ունի մեր ապագա շրջանավարտների աշխատանքային կարիերայի ճանապարհին «կանաչ լույս վառելու» առումով: Ընդամենը, որոշ ուսանողների համար պրակտիկայի հնարավորություններ են ստեղծվում նաև Հայաստանից և Կրասնայից դուրս:

ԱՈՒԿ-ի արտադրական պրակտիկայի ծրագրի մեր ավանդական գործընկերները՝ հանքային ջրեր արտադրող Ջերմուկ

Internships – Key to Success!

By Arthur GRIGORYAN
Internship Coordinator, Teacher of Management

Although the ATC summer internship process both in Armenia and abroad was periodically supervised, students were required to also prepare presentations about their experience and share their knowledge with their classmates. The internship presentations were held in Tsakhkadzor early September. A big conference hall was rented and although it was really tough for everybody to participate in presentations from early morning till evening for two days, that was a very beautiful, interesting and useful event.

The experience that students are acquiring during the internships is very important for applying their theoretical knowledge in working business. Through the internship program the ATC lights the “green-light” for its graduates for making a bright career in life!

One of the most important constituents of education is practical knowledge. ATC is an institution which realizes that importance very well and provides good internship opportunities for its students. Internships are organized in cooperation with both local and foreign companies. Students have internships not only in companies specializing in production and processing of agricultural products, but also in banks, unions and NGOs.

Traditionally, this year internships were organized in

Գրուվը և Դիլիջան Ֆրոլովան, մասնաբերք արտադրող Բիլյանը և Աթենքը, կաթնամթերքի Էլոլա, Դուստր Մելանյա, Դուստր Մարիանա, Որդի Արմեն ընկերությունները, Վան 777 և Գետնատուն գինեգործարանները և շատ ուրիշները հաճույքով ընդունեցին ԱՌԼԿ-ի հերթական ուսանողների խմբերին:

Վրաստանում անցկացված պրակտիկային իրենց վրացի ընկերներին այս տարի միացան երկու հայ ուսանողներ, ովքեր հնարավորություն ունեցան հետևելու, թե ինչպես է զարգանում ագրոբիզնեսը հարևան պետությունում: Նոդարի Պոտկարաձեն հնարավորություն ունեցավ պրակտիկան անցկացնել Թուրքիայի խոշորագույն ընկերություններից մեկում՝ Անադոլու Գրուվում: Նա ասում է. «Դա մեծ փորձառություն էր ինձ համար, քանի որ ես մասնակցեցի համաշխարհային մասշտաբի բիզնեսի գործունեությանը»: Իսկ Ուկրաինայում անցկացրած պրակտիկան Ծաղկածորի հավաքի ժամանակ ներկայացնելու ժամանակ Գիա Լոմինաձեն ասաց. «Հիմա եմ հասկանում, թե ԱՌԼԿ-ում իմ ստացած կրթությունն ինչ բարձր արժեք ունի թե Վրաստանում և թե Ուկրաինայում բիզնես անելու հնարավորությունների տեսակետից»: Իսկ Հասմիկ Գևորգյանն ու Հովիկ Հարությունյանն իրենց ութ շաբաթն անցկացրին Գերմանիայում:

Բառացիորեն բոլոր ձեռնարկությունների և ընկերությունների տնօրենները կամ պրակտիկայի ղեկավարները արտահայտում են այն կարծիքը, որ պրակտիկան ուսանելի և օգտակար էր ոչ միայն ուսանողների, այլև իրենց ընկերությունների համար: ԱՌԼԿ-ցիները համարձակորեն առաջարկում էին կոնկրետ խնդիրների նկատմամբ իրենց մոտեցումները, թույլ կողմերը բացահայտելու և հաղթահարելու իրենց նորարարական գաղափարները: Ընկերությունների ղեկավարները միակամ են նաև հաջորդ տարի ավելի մեծ թվով ԱՌԼԿ-ի պրակտիկան տներ ընդունելու, ինչու էլ՝ նաև աշխատանքի ընդունելու հարցում: ○

Jermuk Group and Dilijan Frolova mineral water bottling companies, Bilyan and Atenk meat processing companies, Elola, Doustr Melanya, Doustr Mariana and Vordi Armen dairy plants, Getnatoun and VAN 777 wineries and many others. This year, the Georgian students had a chance to have their internship in their native country with two Armenian students and see how different businesses operate there. One of them, Nodari Putkaradze was provided a chance to work in one of the leading companies in Turkey – Anadolu Group. He says, “That was a big experience for me, because it enabled to see and participate in a world-scale business”. Nodari was doing a lot of research and writing business plans for launching new product lines in the company. Gia Lominadze spent his internship in Ukraine, one of the countries with the most developed agriculture sector in the region. “Now I can see the high value of the education provided by the ATC and I found many business opportunities in both the Ukraine and Georgia, where this knowledge can be applied,” Gia said during his internship presentation. Two other students, Hasmik Gevorgyan and Hovik Harutyunyan, spent their eight weeks in Germany.

All the directors and internship coordinators in companies were sharing the same opinion that the internship was useful not only for students, but also for their companies. The students were suggesting new approaches in implementation of certain tasks, improving the weaknesses of the related businesses and were always coming up with innovative ideas. Managers of the companies expressed their big readiness to accept more ATC students for internship. Some of them are interested in employing ATC graduates in future. ○

Գործուղում Արարատի և Վայոց Ձորի մարզեր



Ժաննա ԳՐԻԳՐՅԱՆ, ԱՌԼԿ 4

Իմ և համակուրսեցիներիս համար Մասիսի ձկնաբուծական տնտեսությունը հաճելի հայտագործություն էր: Տասնվեց փոքր ջրամբարներում աճեցվում են վեց ձկնատեսակներ, այդ թվում՝ իշխան և բառափ: Մոտ 10000 ձկնկիթ և մոտ 1000 մեծ ձկներ կան ջրամբարներից յուրաքանչյուրում: Ձկնկիթը բերվում է Ջերմուկից: Ձկնաբուծարանի տերն ասաց, որ ինքը ձկները վաճառում է, երբ դրանք դառնում են մեկ-մեկուկես տարեկան: Կերը բերվում է Հոլանդիայից և ԱՄՆ-ից:

Ասում են, հայկական արտադրության խեցգետինը շատ համեղ է: Ես չեմ կարող պնդել, քանի որ չեմ սիրում: Փոխարենը այդ կարծիքին են ձկնաբուծարանի շվեդ, գերմանացի և բելգիացի գործընկերները, ովքեր իրենց երկրներ են ներմուծում Մասիսում արտադրվող խեցգետինը:

Եղեգնաձորում գտնվող ԱՐԻԴ այծաբուծական կենտրոնը մեր հաջորդ այցելության հասցեն էր: Սա իր տեսակի մեջ եզակի տոհմաբուծական տնտեսություն է, որտեղ վերջին վեց տարիների ընթացքում ներկրված չորս ամերիկյան ցեղատեսակների և տեղական այծերի տրամախաչման աշխատանքներ են իրականացվում: Հարոյունս, կաթնատվությունը էապես բարելավվել է, որը կարևորվում է Վայոց Ձորի մարզում զարգացման հեռանկարներ ունեցող այծի պանրի արտադրության տեսակետից: Տեղական ցեղատեսակների մեկ այծի օրական կաթնատվությունը չի անցել 1.5 լիտրից: Ներմուծված արտասահմանյան ցեղատեսակներն ապահովում են 5-6 լ: իսկ խառնածիններն այսօր ապահովում

Field Trip to Ararat and Vayots Dzor Marzes

By Zhanna GRIGORYAN ATC 4

The fishery in Masis, Ararat marz, was a pleasant discovery for me and many of my fellow 4th year students. Six different fish types, including trout and sturgeon, are grown in 16 small reservoirs. There are about 10,000 roes and about 1,000 big fish in each of the reservoirs. The roes are brought from a special roe-growing site in Jermuk, Vayots Dzor marz. The owner of the business said he sells the fish when it becomes 1 – 1,5 years old. The feed for the fish is brought in from the Netherlands and the U.S.

Armenian-produced crawfish is reportedly very tasty. I cannot judge, because I don't like it. Instead, Swedish, German, and Belgian partners can witness this since the crawfish grown in Masis is exported to those countries.



The ARID Goat Breeding Center in Yeghegnadzor, Vayots Dzor that we visited next, is a unique center, where four American goat breeds have been continuously crossbred with local Armenian breeds over the last six years. As a result, a significant growth in milk yield has been achieved, which is critical for the growing goat cheese industry in this marz. The daily milk yield of the local breeds traditionally has been no more than 1,5 l. The brought in

են միջինը 3 և կաթնատվություն:

Արհի կենտրոնում ընդամենը մոտ 70 այծ կա: Սակայն կենտրոնի մասնագետները արհեստական սերմնավորման աշխատանքներ և մասնագիտական խորհրդատվություն են իրականացնում մարզում և մարզից դուրս: Այս ծրագրերի շահառուներն են շուրջ 3000 գլուխ ունեցող տասնյակ ֆերմերներ:

Որպես գործուղումների «պարտադիր» մաս, մենք այցելեցինք նաև հայկական միջնադարյան ճարտարապետության գլուխգործոց Նորավանքի վանական համալիր:

breeds, Zaanen, Togenberg, Alpine, and Nubian, provide 5-6 l in the US or in Europe. The crossbreeds in Yeghegnadzor provide now 3 l of milk per day in average. There are only about 70 goats in ARID. However, the Center's specialists carry out artificial insemination and advisory activities for goat farmers in many villages in the marz and in other marzes. Their beneficiaries are dozens of farmers having goat herds of about 3,000 heads.

As a "compulsory" part of our ATC field trips, we also visited another historical monument, Noravank Monastery complex, a masterpiece of 13-14th century Armenian architecture, cuddled up by the spectacular high mountains of Vayotz Dzor.

Մենք խաղող ճզմեցինք և հարգանք մատուցեցինք Լուսավորչին

We Squeezed Grape and Paid Tribute to the Introducer of Christianity



Կրտսեր խմբի առաջին գործուղումը
Տաթևիկ ԱՐԲԱՐԱՄՅԱՆ, ԱՈՒԿ 3

The First Junior Field Trip
By Tatev ABRAHAMYAN, ATC 3

Սեպտեմբերի 30-ին տեղի ունեցավ ԱՈՒԿ-ի կրտսեր խմբի ուսանողների առաջին աշխատանքային գործուղումը Արմավիրի և Արարատի մարզերում: Ավագներից արդեն լսել էինք, որ գործուղումներն առհասարակ շատ կարևոր են և միշտ հազեցած ծրագիր են ունենում:

On September 30, we, the juniors of the Agribusiness Teaching Center, had our first field trip to a few agribusinesses in Armavir and Ararat marzes. We were excited to experience this ATC activity.

Ագրոբիզնեսի առաջին ձեռնարկությունը, որ մենք այցելեցինք, Արմավիրի **ՍԱՊ** ընկերությունն էր՝ Հայաստանի խոշորագույն վերամշակող ձեռնարկություններից մեկը: Այստեղ արտադրվող գինին, կոնյակը, պտուղաբանջարեղենի պահածոները երկրում լայնորեն հայտնի են: Հուսով եմ, ձեռնարկության մասնագետներին չձանձրացրինք արտադրության և իրացման շղթայի տարբեր օղակներին, ինչպես նաև կառավարման իրենց ընթացակարգերին ու մոտեցումներին վերաբերող մեր անհամար հարցերով:

The first agribusiness we visited was **MAP** wine and canning factory in Armavir. This is one of the largest processing companies in Armenia. Its products (wine, brandy, fruit and vegetable preserves) are well known in the country. I hope we did not bore the specialists of the company with our numerous questions regarding the different stages of the production and marketing chain as well as their management procedures and approaches. In any case, they were very patient and seemed pleased to share the information.

Մեր այցելած երկրորդ ընկերությունը **Արտաշատի պահածոների գործարանն** էր (Արարատի մարզ): Սա նույնպես մեծ հաջողությունների հասած, սանիտարական մաքրությամբ աչքի ընկնող և բարձրորակ արտադրանք թողարկող ձեռնարկություն է: Ի դեպ, Արտաշատում արտադրվող տոմատի մածուկի ավելի քան 95 տոկոսն արտահանվում է: Մենք կուզենայինք ավելի երկար մնալ գործարանում, սակայն ճաշի ժամ էր, իսկ մենք՝ չափազանց քաղցած... Քիչ անց, մենք «սրբեցինք» այն ամենն, ինչ նախատեսված էր ճաշի համար, և պատրաստ էինք միջնադարյան հայ ճարտարապետության գլուխգործոցներից մեկի՝ Խոր Վիրապի հետ մեր հանդիպմանը: Այստեղ ժամանակին Տրդատ արքան բանտարկել է Գրիգոր Լուսավորչին: Մեզանից շատերի համար դա առաջին ուխտագնացությունն էր մեծ Լուսավորչին հարգանքի տուրք մատուցելու համար:



The second company we visited, **Artashat Canned Fruit Factory**, Ararat marz is as successful and clean, and produces high quality canned fruits and vegetables. By the way, more than 95% of the tomato paste produced by Artashat is exported. We

Վերջին տեղը, որ այցելեցինք, **ՎԱՆ 777 գինեգործարանն** էր Արարատի մարզի Տափերական գյուղում: Նախ, մեզ ջերմորեն ընդունեց գործարանի տերը՝ Սիիրան Մանասերյանը: Նա ծանոթացրեց մեզ գինու արտադրության ամբողջ շղթային և թույլ տվեց մասնակցել խաղողի ճզմման գործընթացին: Համտեսեցինք Արարատյան դաշտի լավագույն սորտերի խաղողի թարմ հյութը: Հյութի համն իհարկե գգլխիչ էր, սակայն երբ փորձեցինք վերջնական արտադրանքը՝ նոր հասկացանք, թե ինչու են ասում, թե ճշմարտությունը գինու մեջ է: Այդ ճշմարտությունն էր, որ մեզ ստիպեց երգել ու պարել տեղում և այնուհետև՝ վերադարձի ճանապարհին, ավտոբուսի մեջ: ○

would like to stay longer in the factory and get more information, however it was lunchtime, and we were too hungry. A little later, we "wiped out" literally everything served for the lunch. And we were now ready to see Khor Virap, a late Middle Age monastery, in the premises of which St. Gregory the Illuminator was imprisoned. For some of us it was the first pilgrimage to pay tribute to the introducer of Christianity to Armenia.

The last place was **VAN 777 Winery** in Taperakan village, Ararat marz. First of all we were very warmly welcomed by the owner of the winery, Mr. Mihran Manaseryan. He introduced the winery and allowed us to participate in grape squeezing process. We tasted this natural juice of the best grape varieties grown in the Ararat Valley. The taste was magnificent. However, when I tasted the final product, I understood why they say "The truth is in wine". And this truth made us sing and dance in the winery and in the bus all the way back to Yerevan.

We all are so pleased with our first field trip. We feel so rewarded after our first month of classes, quizzes, case studies, and presentations. ○